պատահեց տեսնել հայ-բոշաների մի բանակ, որ բաղկացած էր մի քանի հարիւր ընտանիքներից: Նրանք բնակւում էին եղէգնեայ շարժական տաղաւարների մէջ, որ չոելու ժամանակ ման էին ածում իրանց գրաստների վրայ: Այդ թափառականները այնքան հետաքրքրեցին մեզ, մանաւանդ մստեր Ֆիշերին, որ մնացինք նրանց բանակում մի ամբողջ շաբաթ: Չափազանց հիւրասէր, ուրախ, անհոգ եւ պարզ մարդիկ էին: Մի հալածանքի պատճառով նրանք գաղթել էին Սպահանի կողմերից եւ անցել էին դէպի Աւղանիստանի անապատները: Խօսում էին պարզ հայերէն, պահպանել էին լուսաւորչական կրօնը, ման էին ածում իրանց հետ շարժական եկեղեցի եւ քահանաներ: Թէ ի՞նչ պատմական հանգամանքներից ստիպուած, կամ ո՞ր ժամանակներից սկսել էին նրանք թափառական կեանք վարել, այդ դժուար էր ստուգել, միայն այդքանը պարզ էր, որ նրանք դարերի ընթացքում այնքան էին փոխուել, որ բոլորովին սեփականել էին իրանց բոշաների սովորութիւնները: Կարօն համարեա սիրահարուեցաւ նրանց վրայ. մենք դժուարութեամբ կարողացանք բաժանել նրան այդ թափառականներից: Ահա այդ հայ-բոշաներն էին գլխաւորապէս Ռափայէլի նամակի առարկան:

Ես անհամբերութեամբ լսում էի. Ասլանը նայեց իր ժամացոյցին եւ շարունակեց.

— Կարօն իր ընկերների հետ, երբ հասնում են Հնդկաստան, մոռանում են այն ուխտը, որ հանդիսաւոր կերպով յայտնեցին՝ Նիւ-եորքից մեկնելու միջոցին, վերջին ճաշի ժամանակ, իրանց բարեկամների շրջանում, այո՛, մոռանում ն եւ հրապուրւում են բոլորովին այլ մտքերով: Նրանք նախ մտնում են Ջաւայ կղզու Բաթաւիայ քաղաքը, որտեղ բնակւում էր Ռափայէլի մայրը եւ նրա ազգականները: Այդ քաղաքում կային նշանաւոր հայ վաճառականներ եւ հարուստ հայ կալուածատէրներ, որոնք իրանց սեփական դաստակերտներում շաքարի եւ լեղակի գործարաններ ունէին: Դրանք Շահ-աբասի Սպահան տարած գաղթականներիցն էին, որոնք Ժը-րդ դարու սկզբում թողեցին Սպահանը եւ գաղթեցին Ջաւայ կղզու վրայ: Բացի Բաթաւիայից, որ կղզու մայրաքաղաքն է, Ջաւայի փոքրիկ քաղաքներում եւս, ինչպէս են՝ Սուրբայիայ, Չրիբոն, Թըգալ, Բանիումաս, Ջըպարայ, Սըմարանգ եւ այլն, կային նոյնպէս հայ գաղթականներ, որ ապրում էին հոլանդացոց իշխանութեան ներքոյ եւ պարապում էին հողային արդիւնագործութեամբ: Անջատուած լինելով Հայաստանից, այդ հեռաւոր կղզու վրայ դեռ նրանց մէջ վառ էր պահուած սէրը՝ թէ՛ դէպի իրանց ազգը եւ թէ դէպի իրանց հայրենիքը: Եթէ հեռուից այլ կերպով չէին կարողանում օգնել իրանց ազգին, բայց փող չէին խնայում: Կարօն ծանօթանում է կղզու հարուստներից մի քանիսի հետ: Այս-